

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՒՇԿԻՆ

1799-1837



Ռուս մեծ բանաստեղծ, ժամանակակից գրական ոռուսերենի հիմնադիր **Ալեքսանդր Պուշկինը** ծնվել է 1799 թ. մայիսի 26-ին Մոսկվայում: 1805-1810 թվականների ամառային ամիսներն ապագա բանաստեղծը սովորաբար անցկացնում էր մայրական տատի մոտ՝ մերձմոսկովյան Ջախարով գյուղում: Վաղ մանկական տպավորություններն արտացոլվել են պոեմների առաջին փորձերում և լիցեյական բանաստեղծություններում: Տատն իր թոռան մասին գրել է. *«Չգիտեմ՝ ինչ դուրս կգա իմ ավագ թոռից: Տղան խելացի է, սիրում է գրքեր, բայց վատ է սովորում, հազվադեպ է դասերը լավ հանձնում: Մեկ տեղից չի շարժվում, չի խաղում երեխաների հետ, մեկ էլ այնպես է բացվում ու ոգևորվում, որ ոչ մի կերպ չես հանդարտեցնի. մի ծայրահեղությունից մյուսի մեջ է նետվում, միջին վիճակ չկա»:*

Վեց տարի Պուշկինն անցկացրեց 1811 թ. բացված Յարսկոսեյսկյան լիցեյում: Այստեղ առաջին անգամ բացահայտվեց և բարձր գնահատվեց նրա բանաստեղծական շնորհը: Լիցեյում անցկացրած տարիների, լիցեյական եղբայրության մասին հիշողություններն ընդմիջտ մնացին բանաստեղծի հոգում: Այդ շրջանում Պուշկինը գրեց չափածո բազմաթիվ ստեղծագործություններ: Քանի որ նա ոգեշնչված էր 17-18-րդ դարերի ֆրանսիացի բանաստեղծների գործերով ու գաղափարներով, ուստի նրա վաղ շրջանի քնարերգության մեջ միավորվել են ֆրանսիական և ռուսական դասականապաշտության ավանդույթները: Պուշկինի՝ 1813-1815 թթ. քնարերգությունը տոգորված է կյանքի վաղանցիկության մասին գաղափարներով. դրանք երիտասարդ բանաստեղծի հոգում առաջացնում էին

կյանքի ուրախությունները վայելելու անհագ ծարավ: 1816 թ . նա դիմում է էլեգիայի ժանրին, որտեղ զարգացնում է այդ ժանրին բնորոշ թեմաներ՝ անպատասխան սեր, երիտասարդության հեռանալը, հոգու մարելը: Չնայած այս շրջանում Պուշկինի քնարերգությունը դեռ ընդօրինակման երանգներ էր կրում, այնուամենայնիվ, արդեն այդ ժամանակ սկսնակ բանաստեղծն ընտրել էր իր յուրահատուկ ուղին: Պուշկինն անդրադառնում է ավելի բարդ՝ հասարակական նշանակության թեմաների՝ 1812 թվականի Հայրենական պատերազմին: Այդ շրջանի գործերում նա նաև քննադատաբար է ներկայացրել Ռուսաստանի կյանքը, որտեղ բոլոր ժամանակների բռնակալները վարպետորեն էին խաղում իրենց դերերը:

Պուշկինը լիցեյն ավարտեց 1817 թվականին: Մեկ տարի անց նա արդեն աշխատում էր «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմն ավարտին հասցնելու ուղղությամբ. այն սկսել էր գրել դեռևս լիցեյում: Պոեմը լույս տեսավ 1820 թվականի մայիսին:

1820 թվականի գարնանը Պետերբուրգի զինվորական գեներալ-նահանգապետը Պուշկինից բացատրություն պահանջեց իշխանավորներին ուղղված երգիծական բանաստեղծությունների բովանդակության վերաբերյալ: Դրված էր նրան Սիբիր արքայազնի կամ միաբանությունում մեկուսացնելու հարցը: Եվ միայն ընկերների ջանքերով հաջողվեց մեղմել պատիժը. նրան մայրաքաղաքից տեղափոխեցին հարավ՝ քիշնևյան գրասենյակ: Մինչ Քիշնև հասնելը նա եղավ հարավային բազմաթիվ քաղաքներում, եղավ նաև Ղրիմում՝ այդ ընթացքում ստեղծելով «Կովկասի գերին» պոեմը, որը հեղինակին ժամանակակից ռուս գրականության գագաթը դարձրեց: Նա վաստակեց Ռուսաստանի առաջին բանաստեղծի համբավը, որն ուղեկցեց նրան ընդհուպ մինչև 1820-ական թվականները, իսկ 1830-ական թվականներին Պուշկինը ստացավ «Ռուս Բայրոն» մականունը: Հետաքրքիր է այն, որ հարավում անցկացրած չորս տարիների ընթացքում Պուշկինը ծանոթացավ Բայրոնի ստեղծագործություններին: Հենց իր՝ բանաստեղծի խոստովանությամբ՝ նա տարված էր Բայրոնի անձով և կրում էր նրա պոեզիայի ազդեցությունը: Ղրիմում գրեց նաև «Բախշիսարայի շատրվանը» պոեմը, որը լույս տեսավ ավելի ուշ՝ 1824թ., և «Եվգենի Օնեգին» վեպը: Կյանքի վերջում նա այսպես էր հիշում Ղրիմը. «Դա իմ Օնեգինի օրրան է»:

Միայն սեպտեմբերին Պուշկինը հասավ Քիշնև: Այդ շրջանում բանաստեղծը հայացք ուղղեց դեպի Ռուսաստանի պատմությունը և ստեղծեց պոեմների մի ամբողջ շարք, որը մեծացրեց նրա ճանաչումը: 1823 թ. Պուշկինը

կարողացավ ծառայության տեղափոխվել Օդեսա՝ կոմս Վորոնցովի գրասենյակ: Հենց այդ ժամանակ նա սկսեց հաստատվել որպես պրոֆեսիոնալ գրական գործիչ, նրա ստեղծագործությունները էլ ավելի մեծ հաջողություն ձեռք բերեցին ընթերցողների շրջանում:

Պուշկինի ստեղծագործությունների առանցքը, հիմնական նպատակը մարդու հուզական վիճակի արտացոլումն է, նրա ներաշխարհի բացահայտումը, իսկ հիմնական հատկանիշները՝ նրա ինքնատիպ լեզուն, արտահայտչական ուժը և սեղմության ու խորքայինի ներդաշնակությունը:

Ալեքսանդր Պուշկինը կյանքից հեռացավ 1837 թ. հունվարի 29-ին մենամարտի ժամանակ ստացած մահացու վերքի պատճառով: Նրան թաղեցին Պսկովի նահանգի Սվյատոգորյան միաբանության տարածքում, հետագայում այնտեղ էլ տեղադրվեց տապանաքարը:

Իր կարճատև, բայց բուռն կյանքի ընթացքում Պուշկինը ստեղծեց ու մարդկությանը թողեց գրական մեծ ժառանգություն: Մեծ բանաստեղծի գրչին են պատկանում նաև «*Բորիս Գոդունով*» ժողովրդական դրաման, «*Գնչուները*», «*Պոլտավա*», «*Պղնձե հեծյալը*» պոեմները, «*Պետրոս Առաջինի արաբը*» պատմավեպը, «*Բելկինի վիպակները*», «*Պիկովայա դամա*» վիպակը, «*Օլեգի երգը*» *բալլադը*, տարբեր թեմաներով գրված բազմաթիվ բանաստեղծություններ, հեքիաթներ, ճամփորդական հուշեր և արժեքավոր այլ գործեր:

Դեռևս կենդանության օրոք բանաստեղծին կոչել են հանճար: Նրա նկատմամբ ընթերցողի սերը հասել է պաշտամունքի: Նրա ստեղծագործությունները սիրված ու ընդունված են ոչ միայն իր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս: Այդ պատճառով Պուշկինի հիմնական ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ հայերեն:

## ՕԼԵԳԻ ԵՐԳԸ

*Թարգմանությունը՝ Հովհ. Թումանյանի*

Ելնում է ահա Հըզոր Օլեգը  
Խենթ խազարներից վըրեժ առնելու,  
Նըրանց համարձակ հարձակման համար  
Գյուղերը սըրի-հըրի մատնելու:  
Եվ իր համհարզով, հագած կուռ գրահ,  
Գընում է նա սեգ նըժույգի վըրա:

Մըթին անտառից նրա հանդիման  
Գալիս է ահա վըհուկ ծերունին,  
Մուտ գալիքների մեկնիչն ու հըման,  
Կյանքում հընազանդ միայն Պերունին,  
Աղոթք ու հմայքով ողջ դար անցկացրած:  
Եվ Օլեգ ծերին ընդառաջ գընաց:

— Ասա՛ ինձ, գուշա՛կ, ծերդ անմահների,  
Կյանքիս մեջ ինձ հետ ի՞նչ է լինելու,  
Եվ, ի խընդություն չար ոսոխների,  
Շուտո՞վ եմ արդյոք շիրիմ իջնելու:  
Բաց մեկնիր բուլորն, ինձնից չըքաշվես,  
Վարձըդ՝ քու սիրած ձին կըտամ ես քեզ:

— Չեն վախում գետերն երկրի  
մեծերից,  
Եվ պետք չի նըրանց պարզեն  
իշխանի,  
Նըրանց իմաստուն լեզուն՝ վերևից  
Ազդված՝ խոսում է կամըը երկընթի.—  
Անհայտ են գալոց տարիքն ու մըթին,  
Բայց կարդում եմ գիրդ ես քու  
ճակատին:



Դե՛ միտքըդ պահիր իմ խոսքն այսօրից:  
Փառքն է կյանքի մեջ խընդում հերոսին.  
Հաղթության փառքով հրոչակված ես դու,  
Վահանդ՝ Բյուզանդիո բարձր դարպասին:  
Հընազանդ են քեզ և՛ ցամաք, և՛ ծով,  
Նայում է ոսխոյ բախտիդ նախանձով:

Ե՛վ կապույտ ծովի հեղհեղուկ ալիք,  
Ահեղ փորթորկի ժամին կատաղի,  
Ե՛վ նետ, և՛ պարսետ, և՛ նենգող դաշույն,  
Խընայում են միշտ կյանքը հաղթողի:  
Վերք չես առնիլ դու քո կուռ զըրահում,  
Հըզորին անտես ոգի է պահում:

Ոչ մի վըտանգից չի վախում քու ձին,  
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.  
Մերթ կանգնում է հեզ՝ նետերի տակին,  
Մերթ թըռչում ռազմի դաշտերի վըրա.  
Ե՛վ ցուրտ, և՛ կըռիվ ոչինչ են դըրան,  
Բայց... դա կըլինի պատճառ քու մահվան:

Օլեզը խնդաց. և սակայն մըրթնեց,  
Մըռայլեց հանկարծ չարագույժ մըտքից.  
Լուռ ու մըտախոհ՝ թամբիցը բըռնեց,  
Ներքև է իջնում սիրած նըժույգից,  
Ու վերջին անգամ իր հին ընկերին  
Փայփայում, շոյում, փարում է վըզին:

— Դե՛հ, մընաս բարյավ, վաղեմի ընկեր.  
Ժամանակն եկավ մեր բաժանվելու.  
Հանգիստ կաց հիմա, էլ ոտըս բընավ  
Քու ասպանդակի մեջ չեմ դընելու:  
Դե՛հ, գընա՛, բայց միշտ հիշիր Օլեզին:  
Է՛յ, մանկլավիկնե՛ր, հեռու տարեք ձին:



— Ծածկեցե՛ք սրբան թավարծի գորգով,  
Սանձիցը բռնած մարգերըս տարե՛ք,  
Լողացրե՛ք, պահեք ընտրած հատիկով,  
Աղբյուրի վրճիտ ջրով ջրեցեք:  
Եվ մանկավիհներն իսկույն ձին տարան,  
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին նըրան:

Յընձում է խմբով անմահ Օլեգը  
Ջրվարթ ձայներով լիք բաժակների.  
Ճերմակ է նըրանց գըլխի ալիքը,  
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...

Հիշում են նըրանք օրերն անցկացրած,  
Եվ կըռիվները միասին վարած:

— Բայց իմ ընկե՛րը, գոչեց Օլեգը.  
Ո՞ր է, ինձ ասեք, սիգապանձ իմ ձին.  
Առո՞ղջ է արդյոք, այնպես սրընթաց,  
Այնպես կըրակոտ, աշխույժ տակավին...  
Եվ լըսում է, որ սեպ բըլրի վըրա  
Մահու սև քընով վաղ է քնել նա:

Խոնարհեց գըլուխն Օլեգը հըզոր,  
Եվ միտք է անում.— Ի՞նչ եղավ հըման.  
Սըտախոս կախա՛րդ, անխե՛լք ալևոր,  
Թե չէի լսել ես քու սըտության,  
Կարեի մինչ օրս իմ ձին ես հեծնել:  
Եվ ձիու ոսկերքն ուզում է տեսնել:

Գընում է Օլեգն ահա պալատից,  
Նըրա հետ Իգորն և հյուրերը հին.  
Տեսնում են ձիու ոսկերքը թափված  
Բըլլուրի վըրա, Դընեպրի ափին:



Փոշին ծածկում է, անձրևն ողողում,  
Ու սեզը վըրեն քամին օրորում:

Ոտն զգույշ դըրավ իշխանը գանգին  
Ու կանչեց.— քընի՛ր, միայնակ ընկեր,  
Քեզնից շատ ապրեց քու տերն ալևոր.  
Թարմ շիրմիս վըրա դու չես մահաբեր  
Տապարի տակին սեզը ներկելու,  
Քու տաք արյունով աճյունս հարգելու...

— Ահա՛ թե ուր էր օրհասըս պահված.  
Այս չոր ոսկորն էր ինձ մահ սպառնում:  
Այնինչ՝ անկենդան գանգիցը հանկարծ  
Ֆըշշալով սողաց մի օձ չարաթույն,  
Սև թռկի նըման փաթաթվեց ոտքին,  
Իշխանն օձահար գոռաց ցավագին:

Փըրփրուն թասերը շըրջան են առնում  
Օլեգի մահվան տըխուր հարկինքին,  
Իգորն ու Օլգան բըլլուրի վըրա,  
Նըստած է խումբը Դընեպրի ափին —  
Հիշում են քաջերն օրերն անցկացրած  
Եվ կոփվները միասին վարած:

## ԵՍ ԿԱՐԾՈՒՄ ԷԻ

*Թարգմանությունը՝ Ալ. Ծափուրյանի*

Ես կարծում էի. սիրտըս մոռացավ  
Սիրո տառապանքն — էլ չի տանջվելու.  
Ես ասում էի. «Ի՛նչ կար ու անցավ,  
Էլ չի՛ կրկնվելու, էլ չի՛ կրկնվելու»:

Անցավ սիրո վիշտ, անցավ լուռ թախիծ,  
Խաղաղ նիրհեցին և՛ մեղմ անուրջներ...  
Բայց ահա նոքա հուզվում են նորից  
Քո ուժն զգալով, ո՛վ հաղթական սեր...

\*\*\*

*Թարգմանությունը՝ Հովհ. Թումանյանի*

Ատում եմ քեզ և քո գահը.  
Միահեծան գոռոզ ցար,  
Եվ քո որդոց ու քո մահը  
Պիտի տեսնեմ անպատճառ:



# ՌՈՄԱՆՍ

*Թարգմանությունը՝ Հովհ. Թումանյանի*

Մի աշնանային մռայլ իրիկուն  
Մի աղջիկ գնում էր անմարդ տեղերով,  
Յուր անբախտ սիրո ծնունդը թաքուն  
Բռնած դողդոջուն, քնքուշ ձեռքերով:  
Բոլորը լուռ էր. հոգնած աշխարքը  
Հանգստանում էր գիշերվա մթնում,  
Այնինչ ուշադիր աղջիկն յուր աչքը  
Երկչոտ հայացքով չորս կողմն էր ածում:

Եվ, հառաչելով անմխիթարանք,  
Նա նայեց անմեղ այն արարածին.  
«Քնած ես, մանուկ, դու իմ տառապանք...  
Եվ անտեղյակ ես իմ սրտի վրշտին...  
Աչքդ բաց կանես բարձրականչ լալով,  
Սակայն իմ կրծքին էլ չես կաշիլ դու.  
Վաղ առավոտյան տարաբախտ քո մոր  
Ջերմ համբույրներին չես հանդիպելու:—

Ճչալով իզուր կըկանչես նրան.  
Ավա՛ղ, ամոթ ինձ,— ես եմ մեղավոր.  
Դու կըմոռանաս մորըդ հավիտյան,  
Բայց պիտի հիշեմ ես քեզ ամեն օր:  
Ուրիշ ծնողներ կըխնամեն քեզ,  
Եվ կասեն— դու օտար ես մեզ համար.  
Իմ ծնողները ո՛ր եմ, կըհարցնես,  
Սակայն չես գտնիլ ոչ հայր և ոչ մայր:

Թշվա՛ռ երեխա, մտքով տըխրագին  
Կըտանջվես օտար մանուկների մեջ,

Կընայես նրանց մոր փառաքանքին  
Մոայլուն հոգով մինչև կյանքիդ վերջ.  
Ամեն ժամանակ բախտըդ կանիծես,  
Ամեն տեղ ատված, օտար ու մենակ,  
Եվ միշտ նախատինք ու ծաղր կըլսես...  
Օ՛, ների՛ր, ներիր ինձ այն ժամանակ:

Դեռ քնած ես դու... Թող քեզ, խեղճ մանուկ,  
Այս վերջին անգամ իմ կրծքին սեղմեմ,  
Օրենքն անիրավ, խիստ և անողոք  
Մի դատավճիռ ունի մեր ընդդեմ:  
Մինչև քո անմեղ ուրախությունը  
Տարիները չեն քշել տակավին,  
Քնի՛ր, սիրելի, սև թախիծները  
Խորթ են՝ մանկության խաղաղ օրերին»:

Լուսինն անտառի ետևից հանկարծ  
Երևաց, մոտիկ մի խրճիթ տեսավ,  
Դողալով, գունատ և սաստիկ լքած  
Նրա դռանը ահա մոտեցավ,  
Զգույշ կորացավ ու կամաց դրեց  
Յուր երեխային օտարի շեմքում,  
Իսկույն սարսափով երեսը դարձրեց  
Եվ անհայտացավ գիշերվա մթնում:

## **Քննարկում**

Դասընկերներիդ հետ քննարկո՛ւմ կազմակերպիր հետևյալ թեմայի շուրջ՝  
«Աշխարհում ինչո՞ւ գոյություն ունեն լքված երեխաներ ու մանկապրներ»: